ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

TATEVIK MKRTCHYAN

MODERN TRENDS OF DEVELOPMENT OF WORLD MARKET OF HOTEL SERVICES

Key words: *trends in the development of hotel services, tourist visits, geographical integration, strategic alliances, prices for services*

The market of hotel services is an important infrastructure the tourism market. It is being reshaped under the influence of a number of factors of external and internal environment. The global market for hotel services is characterized by integration and centralization of management processes. The hotel chains that have emerged as a result of these processes have their advantages: a single booking system, a single database, accessibility of new technologies, general marketing policy and information support.

ԼԻՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Ասպիրանտ,ՀՊՏՀ

ԿՅԱՆՔԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՏՀԶԿ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. *կյանքի որակ, կյանքից բավարարվածության մակարդակ, առողջական վիճակի սուբյեկտիվ գնահատական, զբաղվածության մակարդակ*

«Կյանքից բավարարվածություն» հասկացությունը սերտորեն փոխառնչվում է կյանքի որակի հետ: Զբաղվածության մակարդակը, առողջական վիճակի սուբյեկտիվ գնահատականը կյանքից բավարարվածության մակարդակի վրա ամենամեծ ազդեցություն ունեցող գործոններն են. զբաղվածության մակարդակի 1 տոկոսային կետով աճը հանգեցնում է կյանքից բավարարվածության մակարդակի 0,07, իսկ առողջության սուբյեկտիվ գնահատականի 1 միավորով աճը՝ 0,03 միավորով աճի:

«Կյանքից բավարարվածություն» հասկացությունը դեռևս 1961 թ. շրջանառվում էր, և ամերիկացի հոգեբան Ն. Նեուգարթեն այն բնութագրում էր որպես հաջող ծերացման գործառնական սահմանում: Սամները կյանքից բավարարվածությունը 1966 թ. սահմանել է հետևյալ կերպ. «Կենսապայմանների դրական գնահատական կամ սուբյեկտիվ դատողություն, որը նվազագույն չափով հավասարակշռում է անձի սպասումները և արժեհամակարգը»:

1970-ականներից սկսած՝ ամերիկյան սոցիալական հետազոտությունների մեծամասնությունը վերաբերում էր հենց կյանքից բավարարվածությանը:

«Կյանքից բավարարվածությունը տվյալ պահի դրությամբ սուբյեկտի բացասական, դրական կամ չեզոք վերաբերմունքն է իր կյանքի նկատմամբ: Կյանքից բավարարվածությունը բարեկեցության երեք հիմնական բաղադրիչներից մեկն է» (Է. Դիեներ (1984 թ.)): Կյանքից բավարարվածությունը նաև ներառում է սուբյեկտի կյանքը փոխելու ցանկությունը, բավարարվածությունն իր անցյալից և ապագայի սպասումները[1]:

«Կյանքից բավարարվածություն» հասկացության շրջանառումը 19-րդ դարում հիմք հանդիսացավ սոցիալական պետության հայեցակարգի զարգացման համար: 1990-ականներին արդեն իսկ ուշադրության կենտրոնում էր սուբյեկտի՝ կյանքից բավարարվածության և եկամտի միջև գոյություն ունեցող կապը:

Սուբյեկտի կենսագործունեության տարբեր տեսանկյունների գնահատականները սերտորեն կապակցված են նրա կյանքից բավարարվածության մակարդակի հետ[2]:

Դեռևս 1999 թ. սկսած՝ մի շարք գիտնականներ կյանքից բավարարվածության մակարդակի և սուբյեկտի գործունեության տարբեր տեսանկյունների միջև կապի հիմնավորման նպատակով կիրառեցին մաթեմատիկական մոդելավորումը: 1999-ին Ջանեթ դը Նեալը կառուցեց մաթեմատիկական մոդել՝ հիմնվելով հետևյալ հայեցակարգի վրա. «Կյանքից բավարարվածության մակարդակի և սուբյեկտի գործունեության բոլոր ոլորտների միջև առկա է ֆունկցիոնալ կապ»: 2004 թ. վերջինս, Ջ.Մ. Սիրգիի հետ միասին, վավերացրին մոդելը, լրացնելով, որ կյանքից և ազատ ժամանակի տնօրինումից բավարարվածության մակարդակները միջկոռելացված գործոններ են: 2010 թվականից հետո կյանքից բավարարվածության մակարդակի վերաբերյալ հետազոտությունները հիմնականում ուղղված են առանձին սոցիալական ասեռատարիքային խմբերի:

Հաշվի առնելով կյանքի որակի գնահատման լավագույն միջազգային փորձը՝ սույն հոդվածը նպատակ ունի բացահայտելու, թե կյանքի որակի գնահատման որ ասպեկտներն են առավել առնչվում կյանքից բավարարվածության մակարդակի հետ:

«Ինչպե՞ս է ընթանում կյանքը», 2011 թվականից սկսած, ՏՀԶԿ-ի կողմից իրականացվող կյանքի որակի գնահատման ամենամյա հետազոտություն է: Դրա հիմնական նպատակն է ապահովել ավելի արդյունավետ քաղաքականությունների կիրարկում, որոնք կհամապատասխանեն ՏՀԶԿ ռազմավարական նպատակների իրագործմանը և կյանքի որակի բարելավմանը: Հետազոտության շրջանակներում կյանքի որակի գնահատումն իրականացվում է բնակչության գործունեության 11 ուղղություններով. կենցաղային պայմաններ, եկամուտներ, զբաղվածություն, համայնք (սոցիալական աջակցող ցանցի կողմից իրականացվող գործունեության արդյունավետության գնահատական), կրթություն, արտաքին միջավայր, քաղաքացիական ներգրավվածություն, առողջություն, կյանքից բավարարվածություն, անվտանգություն, աշխատանք-կյանք կապի հավասարա-

[1] Buetell N., (2006). *Life satisfaction, a Sloan Work and Family Encyclopedia entry*. Retrieved May 10, 2007, Sloan Work and Family Research Network: http://wfnetwork.bc.edu/encyclopedia_entry.php?id=3283&area =academics.

[2] Ateca-Amestoy, Serrano-del-Rosal, & Vera-Toscano, 2008; Lloyd & Auld, 2002; Van Praag & Ferrer-i-Carbonell, 2004: Van Praag et al, 2003.

կշռություն: Նշված ուղղություններից յուրաքանչյուրը ներառում է մինչև 4 ցուցանիշ, որոնց արժեքները ստացվել են Եվրոպական միության կողմից հրապարակվող վիճակագրական տվյալներից, ՏՀԶԿ անդամ երկրների ազգային վիճակագրական ծառայություններից, ՏՀԶԿ տվյալների բազաներից, իսկ սուբյեկտիվ ցուցանիշները, ինչպիսիք են կյանքից բավարարվածությունը, քաղաքացիական ներգրավվածությունը՝ հարցումների արդյունքում: 2011 թ. սկսած՝ կյանքի որակի գնահատման 11 ուղղություններում ներառված ցուցանիշներում էական փոփոխություններ չեն գրանցվել, և ՏՀԶԿ-ն իր պաշտոնական հրապարակումներում[1] նշում է, որ նյութական կենսապայմանները և կյանքի որակը բնութագրող ցուցանիշների ցանկը հետագայում կհամալրվի ժամանակի ընթացքում բարեկեցության կայունությունը բնութագրող ցուցանիշով: Հետազոտության շրջանակներում լռելյայն ՏՀԶԿ-ն չի իրականացնում երկրների վարկանշավորում, փոխարենը՝ պաշտոնական կայքի համապատասխան գործիքի միջոցով թույլ է տալիս սահմանել գնահատման ուղղության կարևորությունը (0-5 կշռային սանդղակով) և արդյունքում ստանալ ինդեքսի արժեքը: Բոլոր սուբյեկտիվ գնահատականները հավաքագրվում են ՏՀԶԿ-ի կողմից վարվող տվյալների բազաներում, ինչը թույլ կտա ժամանակի ընթացքում կատարելագործել հետազոտության մեթոդաբանությունը:

Ըստ ՏՀԶԿ հետազոտությունների արդյունքների՝ 2014–2016 թթ. ընթացքում կյանքից բավարարվածության մակարդակի ամենաբարձր արդյունքները արտավոլված են գծապատկեր 1-ում.



Գծապատկեր 1. ***2016 թ. կյանքից բավարարվածության մակարդակի ամենաբարձր գնահատական ունեցող ՏՀԶԿ երկրները***

2015 թ. զարգացած երկրներում կյանքից բավարարվածության ամենաբարձր մակարդակը գրանցվել է Իսլանդիայում և Շվեյցարիայում՝ 7.50՝ հնարավոր 10-ից, այնուհետ՝

[1] http://www.oecdbetterlifeindex.org/about/better-life-initiative/#question2

Ֆինլանդիայում և Նորվեգիայում (7.40), Ավստրալիայում և Շվեդիայում (7.30): 2014 թ. կյանքից բավարարվածության ամենաբարձր մակարդակը գրանցվել է Շվեյցարիայում՝ 7,50՝ հնարավոր 10-ից, այնուհետև՝ Նորվեգիայում (7.70), Կանադայում և Դանիայում (7.60),Իսլանդիայում և Ավստրալիայում (7.50), Մեքսիկայում և Նիդեռլանդներում (7.40): 2013թ. կյանքից բավարարվածության ամենաբարձր մակարդակը գրանցվել է Շվեյցարիայում՝ 7,80՝ հնարավոր 10-ից, այնուհետև Նորվեգիայում (7.70), Շվեդիայում (7.60), Նիդեռլանդներում և Դանիայում (7.50), Ֆինլանդիայում և Ավստրալիայում (7.40): Կյանքից բավարարվածության ամենացածր մակարդակները գրանցվել են 2016 թ. Պորտուգալիայում (5.10), 2015 թ.՝ Հունաստանում (4.80), 2014 թ.՝ Հունաստանում (4.70), 2013 թ.՝ Հունգարիայում (4.70):

Կյանքի որակի և կյանքից բավարարվածության մակարդակների փոխառնչությունների բացահայտման նպատակով դիտարկվել են ՏՀԶԿ 2013–2016 թթ. վիճակագրական տվյալները, որոնց հիման վրա էլ հենց կառուցվել է մաթեմատիկական մոդելը:

Կոռելյացիոն վերլուծության արդյունքում ակնհայտ է, որկյանքից ընդհանուր բավարարվածության մակարդակը, որպես բացատրվող փոփոխական, առավել մեծ կախվածության մեջ է գտնվում մարդկանց առողջական վիճակի վերաբերյալ գնահատականից (r=0.63) և երկրում զբաղվածության մակարդակից (r=0.71): Վերոնշյալ բացատրող փոփոխականները կոլինեար չեն և չեն գտնվում գծային կախվածության մեջ:

Ռեգրեսիոն մոդելի լուծման արդյունքում դետերմինացիայի գործակիցը 0.99 է, ինչը նշանակում է, որ կյանքից բավարարվածության մակարդակի 99% փոփոխությունը բացատրվում էզբաղվածության մակարդակի, առողջական վիճակի վերաբերյալ սուբյեկտիվ գնահատականի փոփոխությամբ: Իսկ կյանքից բավարարվածության մակարդակի 98% փոփոխությունը բացատրվում էզբաղվածության մակարդակի, առողջական վիճակի վերաբերյալ սուբյեկտիվ գնահատականի փոփոխությամբ՝ հաշվի առնելով ընտրանքի ծավալը և անկախ փոփոխականների թիվը: Մոդելն ունի հետևյալ տեսքը.

$$Level\ of\ life\ satisfaction_{eval} = 0.07 * \mathbf{empl} + 0.03 * \mathbf{health}$$

Մոդելը ցույց է տալիս որ զբաղվածության մակարդակի 1 տոկոսային կետով աճը բերում է կյանքից բավարարվածության մակարդակի 0,07, իսկ առողջության սուբյեկտիվ գնահատականի 1 միավորով աճը՝ 0,03 միավորով աճի: Զբաղվածության մակարդակը և առողջական վիճակի վերաբերյալ գնահատականը նշանակալի են, քանի որ դրանց դեպքում զրոյական հիպոթեզը հերքվում է՝ ($t_{empl_փաստ}$=27,87, $t_{health_փաստ}$=12.11): Ե՛վ ճշգրտված դետերմինացիայի գործակիցը, և՛ F նշանակալիության գործակիցը (Significance F= 5E-171), և՛ առանձին ցուցանիշների P նշանակալիության արժեքները (P-valueempl=1.88E-59, P-valuehealth=1.2E-23) վկայում են, որ, ըստ մոդելի, 95 տոկոս նշանակալիության մակարդակում հիպոթեզն ապահովում է կախյալ փոփոխականի վարիացիայի բարձր բացատրելիություն անկախ փոփոխականների կողմից:

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ բնակչության կյանքից բավարարվածության մակարդակի վրա զբաղվածության մակարդակը առավել մեծ ազդեցություն ունի, քան առողջական վիճակի սուբյեկտիվ գնահատականը: Այս փաստը կարելի է բացատրել այն

հանգամանքով, որ զբաղվածության մակարդակն ուղղակիորեն առնչվում է կյանքի որակի վրա ազդող տարբեր ուղղությունների. որքան բարձր է երկրում զբաղվածության մակարդակը, այնքան մարդիկ ավելի բավարարված են արտաքին միջավայրի վիճակից, մասնավորապես՝ ջրի որակից (r=0,67), աջակցող ցանցի գործունեությունից[1] (r=0,56), միջին տարեկան անվանական աշխատավարձից (r=0,52):

Անդրադառնալով առողջության սուբյեկտիվ ընկալման և կյանքից բավարարվածության, ինչպես նաև կյանքի որակի վրա ազդող այլ ուղղությունների կապին՝ կարող ենք ասել, որ որքան բարձր է առողջական վիճակի վերաբերյալ սուբյեկտիվ գնահատականը, այնքան ավելի բարենպաստ են կենցաղային պայմանները, մասնավորապես՝ այնքան ավելի շատ է մեկ անձի առկա սենյակների քանակը (r=0,55), և մյուս կողմից՝ այնքան ավելի ցածր է բնակչության մասնաբաժինը, ովքեր ապրում են այնպիսի բնակարանային պայմաններում, որոնք զուրկ են նվազագույն կենցաղային հարմարանքներից (r=-0,55), ավելի բարձր է միջին տարեկան անվանական աշխատավարձը (r=0,5):

Իսկ ինչպիսի՞ն է կյանքից բավարարվածության մակարդակը Հայաստանի Հանրապետությունում: «Կյանքն անցումային շրջանում». այսպես է կոչվում Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկի կողմից 2006 թ-ից իրականացվող հետազոտությունը, որի շրջանակներում, Համաշխարհային բանկի հետ համատեղ, աշխարհի 34 անցումային երկրների շուրջ 30000 տնային տնտեսություններում կատարվում է հարցում և հավաքագրվում բնակչության կենսագործունեության բոլոր ոլորտների վերաբերյալ տեղեկատվություն: Հետազոտությունը իրականացվել է նաև 2010 թ. և 2016 թ.: Հետազոտության հարցաթերթիկը ներառում է հետևյալ բաժինները. առաջնային տեղեկատվություն հարցվողի վերաբերյալ, բնակարանային պայմաններ և ծախսեր, անձի արժեհամակարգ, բնակլիմայական պայմաններ, կրթություն, աշխատանքային պայմաններ և ձեռնարկատիրական գործունեություն, հանրային կառավարում, ճգնաժամի ազդեցությունը տնային տնտեսության վրա:

Ըստ 2016 թ. կատարված հարցման արդյունքների՝ կյանքից բավարարվածության ամենացածր մակարդակները գրանցվել են Մոլդովայում, Ուկրաինայում և այնուհետև Հայաստանում: Կանանց շրջանում միջինում կյանքից բավարարվածության ավելի բարձր մակարդակ է գրանցվել անցումային տնտեսությամբ 25 երկրում, իսկ Հայաստանում, Ադրբեջանում, Կիպրոսում, Մակեդոնիայում, Հունաստանում, Ղազախստանում և Տաջիկստանում տղամարդկանց շրջանում գրանցվել է կյանքից բավարարվածության ավելի բարձր գնահատական: Հայաստանում, Հունաստանում, Վրաստանում և Մոլդովայում հարցվողների միայն 30 տոկոսն է բավարարված իր աշխատանքային պայմաններով: Ըստ 2016 թ. հարցման արդյունքների՝ Հայաստանում հարցվողների 30 տոկոսը նշել է, որ հաշվի առնելով առկա կենսապայմանները՝ տվյալ պահին բավարարված է իր կյանքից:

[1] Սուբյեկտիվ գնահատականներ են՝ ըստ ՏՀԶԿ անդամ երկրների բնակիչների հաղորդումների: Հարցը ձևակերպվել էլ հետևյալ կերպ. «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու պարագայում արդյո՞ք կան անձինք, որոնց կարող եք վստահել իրավիճակից ելք գտնելու համար»:

2010 թ. նույնկերպ պատասխանողների մասնաբաժինը 26 տոկոս էր, իսկ 2006 թ.՝ 23 տոկոս:

Այսպիսով՝ կյանքի որակի գնահատման տեսանկյունից զարգացած երկրում զբաղվածության մակարդակը և առողջական վիճակի սուբյեկտիվ գնահատականները մարդկանց կյանքից բավարարվածության մակարդակի վրա ամենամեծ ազդեցություն ունեցող գործոններն են.զբաղվածության մակարդակի 1 տոկոսային կետով աճը բերում է կյանքից բավարարվածության մակարդակի 0,07, իսկ առողջության սուբյեկտիվ գնահատականի 1 միավորով աճը՝ 0,03 միավորով աճի: Զբաղվածության մակարդակի աճն իր հերթին հանգեցնում է մարդկանց՝ արտաքին միջավայրից, սոցիալական կապերի և աջակցող ցանցի գործունեությունից, միջին տարեկան անվանական աշխատավարձից և կյանքից ընդհանուր բավարարվածության մակարդակի աճին: Առողջական սուբյեկտիվ գնահատականի աճը հանգեցնում է ավելի բարենպաստ կենցաղային պայմանների, միջին տարեկան անվանական աշխատավարձի և կյանքից ընդհանուր բավարարվածության մակարդակի աճի: Այսօր ՀՀ-ում զբաղվածության մակարդակի աճը համարվում է գերակա խնդիրներից մեկը և, ըստ Հայաստանի Հանրապետության 2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի, զբաղվածության մակարդակի 2025 թ. նպատակային արժեքը պետք է լինի 70 տոկոս:

ЛИННА САРГСЯН

ОЦЕНКА УДОВЛЕТВОРЕННОСТИ ЖИЗНЬЮ В СТРАНАХ ОЭСР

Ключевые слова: *качество жизни, уровень удовлетворенности жизнью, субъективная оценка состояния здоровья, уровень занятости*

Концепция «удовлетворения жизни» распространена в разных областях науки и тесно связана с качеством жизни. В странах ОЭСР уровень занятости и субъективные оценки состояния здоровья являются наиболее значимыми факторами, влияющими на уровень удовлетворенности жизнью. 1 процентный пункт увеличения занятости приводит к увеличению удовлетворенности жизнью на 0,07%, а увеличение субъетивной оценки здоровья на 1 балл приводит к увеличению удовлетворенности жизнью на 0,03.

LINNA SARGSYAN

EVALUATION OF LIFE SATISFACTION IN OECD COUNTRIES

Key words: *quality of life, level of life satisfaction, self-perceived health, employment level*

"Life satisfaction" is widespreaded in various fields and also closely related to quality of life. In OECD countries employment and self-perceived health are the most significant factors affecting level of life satisfaction. 1 percentage point increase in employment leads to increase in life satisfaction by 0.07%, and same for self-perceived health leads to an increase in life satisfaction by 0.03.